ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2010 թվականի N -Ն

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի թվով 11 միավոր տրանսպորտային միջոցները (այսուհետ՝ գույք)՝ համաձայն հավելվածի, օտարել դասական աճուրդով՝ որպես գույքի առանձին տարրեր։

2. Սահմանել գույքի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի մարտի 27-ի «Մասնավորեցվող պետական գույքի հաշվեկշռային և շուկայական մեթոդով գնահատման կարգի մասին» N 209 որոշմամբ սահմանված կարգով 2009 թվականի հոկտեմբերի 23-ին գնահատված արժեքը և մեկնարկային գինը՝ համաձայն հավելվածի։

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝

1) աճուրդի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ մամուլում կամ զանգվածային լրատվության մյուս միջոցներով հրապարակել ընդհանուր տեղեկություններ գույքի, աճուրդի անցկացման պայմանների, ժամկետների, գույքի արժեքի որոշման հետ կապված վճարների մասին,

2) աճուրդը կազմակերպել և անցկացնել սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում։

4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին՝ աճուրդի հաղթողի կողմից առաջարկված

գնի վճարումից հետո մեկամսյա ժամկետում աճուրդի հաղթողի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր՝ դրանում նախատեսելով, որ գնորդը պարտավորվում է իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաև գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված վճարներն ու տուրքերը։

5. Սահմանել, որ առաջին աճուրդի ժամանակ չվաճառված գույքի վաճառքի նպատակով կազմակերպվում են աճուրդներ, ընդ որում, յուրաքանչյուր հերթական աճուրդի ժամանակ գույքի վաճառքի մեկնարկային գինը նվազեցվում է վերջին աճուրդի մեկնարկային գնի 20 տոկոսի չափով։

6. Վճարումները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության արժույթով՝ գույքի վաճառքի գինն ուղղելով «Պետական սեփականություն համարվող հիմնական միջոցների (ֆոնդերի) օտարումից մուտքեր» գանձապետական հաշվին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
-ի N -Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ Է ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ՝ ԴԱՍԱԿԱՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ 11 ՄԻԱՎՈՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ**

Հ/Հ	Գտնվելու վայրը	Տրանսպորտային միջոցի անվանումը	Թողարկման/Ձեռք բերման տարեթիվը	Գույքի գնահատված արժեքը (հազար դրամ)	Գույքի մեկնարկային գինը (հազար դրամ)	Գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը (հազար դրամ)	Պետհամարանիշը
1	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՍԻՍԻԱՆ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք.Սիսիան, Սիսիական 37	ՎԱԶ 21219	1993/1998	310.0	310.0	26.1	277SU54
2	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՏԱՇԻՐ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Տաշիր, Լենինի 2	ՎԱԶ 2107	1996/2006	559.0	559.0	18.0	276LS39
3	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԳԱՎԱՌ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Բոշնաղյան 4	ՎԱԶ 21213	1999/1999	512.0	512.0	20.4	765LL01
4	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ՄԱՐՏՈՒՆԻ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Մարտունի,Գ.Նժդեհի 3	ՎԱԶ 21213	1996/2003	319.0	319.0	20.4	228LL11
5	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԻՋԵՎԱՆ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Սահմանադրության1	ՎԱԶ 21213	1995/1999	385.0	385.0	20.4	648SL57
6	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԱՐՏԱՇԱՏ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Արարատի մարզ, ք.Արտաշատ, Մարքսի 15	ԳԱԶ 3110	1998/1998	763.0	763.0	18.0	110LL02

7	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գորիս տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Գ.Նժդեհի 22	ԳԱԶ 3102	1999/1999	1016.0	1016.0	26.1	792LU63
8	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԱՆԻ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Շիրակի մարզ, ք.Անի, Մադաթյան 1 Ա	ՎԱԶ 2109	1989/2004	474.0	474.0	22.8	388LL11
9	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԳԱՎԱՌ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, Գ.Նժդեհի 1	ԳԱԶ 31029	1994/2007	424.0	424.0	18.0	987SU36
10	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԲԵՐԴ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Տավուշի մարզ, ք.Բերդ, Լ.Բեկի 5	ՎԱԶ 21099	1998/2005	1024.0	1024.0	20.4	754LL01
11	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ԱԼԱՎԵՐԴԻ տարածքային ստորաբաժանում՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Թումանյան 2	ՎԱԶ 21213	1996/2000	362.0	362.0	18.0	348UL38

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

«Պետական գույքն օտարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի հաշվեկշռում հաշվառված որոշ տրանսպորտային միջոցների մաշվածությամբ (ֆիզիկապես և բարոյապես), որոնց շուկայական գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պատվերով «Պետական գույքի գույքագրման, հաշվառման և գնահատման գործակալության» ՊՈԱԿ-ի կողմից և գույքի վերագնահատված ցանկը ՀՀ ԿԱ անշարշժ գույքի կադաստրի պետական կոմիտե է ներկայացվել 2009 թվականի նոյեմբերի 2-ի թիվ Ե 3-4212 գրությամբ։

1.1 կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները

Անշարժ գույքի կադաստրի աշխատանքների իրականացման նպատակով տրանսպորտային միջոցների մեծ մասը շահագործման են հանձնվել մինչև 2000թվականը՝ շուրջ 62%-ը։ Հաշվի առնելով համակարգում առկա ծառայողական ավտոմեքենաների մաշվածությունը, տեխնիկական անսարքությունը և աշխատանքների արդյունավետ կազմակերպման ու իրականացման հարցում ունեցած դերը և նշանակությունը՝կարևորվում է համակարգի տրանսպորտային միջոցների պարբերական թարմացման հարցը։

1.2 առկա խնդիրներին առաջարկվող լուծումները

Սույն որոշման նախագծով օտարման են ներկայացվում թվով 11 միավոր տրանսպորտային միջոցներ, որոնցից 8 միավորը ունեն շուրջ 100% մաշվածք, 2-ը՝շուրջ 90%, 1-ը՝ 65%։ Օտարման ներկայացված ավտոմեքենաները մշտապես գտնվելով աշխատանքային պրոսեցում ֆիզիկապես և բարոյապես մաշվել են և չեն ապահովում ներկայիս աշխատանքային ծանրաբեռնվածությունը, իսկ վերջիններիս վերանորոգումը պահանջում է զգալի աշխատանքային և ֆինանսական ռեսուրսներ, որը տնտեսապես նպատակահարմար չէ։

2.Կարգավորման առարկան

Նախագծով կարգավորվում է համակարգի ավտոբազայի թարմացման և տնտեսապես արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները։

3.Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի կիրառման դեպքում չի խաթարվի հիմնարկի բնականոն գործունեությունը, ինչպես նաև հնարավորություն կընձեռնվի բարձրացնել բնակչությանը մատուցվող ծառայությունների որակը և ապահովել դրանց ժամանակին կատարումը։ Գույքի օտարման նպատակով կազմակերպվելիք աճուրդներին զուգընթաց պետական բյուջեով նախատեսված համապատասխան ֆինասական միջոցների հաշվին ձեռք կբերվեն մեքենաներ և կկազմակերպվեն համապատասխան միջոցառումներ տարածքային ստորաբաժանումների գործունեության բնականոն ընթացքն ապահովելու նպատակով։

Ե.ԶԱԽԱՐՅԱՆ